

## **1 Իրավական դաշտ**

### **Հիմնական գործունեություն**

«Ֆիդես Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ («Ընկերություն») հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն և վարկային կազմակերպության լիցենզիա է ստացել 2009թ. օգոստոսի 4-ին: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Նաիրի Չարյան փող. 17ա:

Ընկերության հիմնական գործունեությունը վարկերի տրամադրումն է: Ընկերության գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից («ՀՀ ԿԲ»): 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերության աշխատակիցների թիվը կազմում էր 12 (2014թ.՝ 12):

### **Բաժնետերերը**

Ընկերության 100% բաժնետերն է «Արցախ Ներդրումային Հիմնադրամ»-ը: Իր ֆինանսավորումն Ընկերությունը ստանում է Բաժնետերից: Արդյունքում, Ընկերությունը տնտեսապես կախման մեջ է Բաժնետիրոջից: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 19-ում:

### **Հայաստանի գործարար միջավայրը**

Հայաստանում տեղի են ունեցել քաղաքական և տնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել և կշարունակեն ազդեցություն ունենալ այս միջավայրում գործող ձեռնարկությունների գործունեության վրա: Հետևաբար, Հայաստանի գործարար միջավայրում ծավալած գործունեությանը հատուկ են ռիսկեր, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Ի լրումն, կապիտալի և վարկային շուկաներում վերջերս դիտվող ճգնաժամը ավելի է բարձրացրել տնտեսական անորոշության մակարդակը գործարար միջավայրում: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության ֆինանսական վիճակի և գործառնությունների վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

## **2 Պատրաստման հիմունքը**

### **Համապատասխանության մասին հայտարարություն**

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

### **Չափման հիմունքները**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

### **Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»): Ղեկավարությունը որպես Ընկերության ֆունկցիոնալ արժույթ է սահմանել դրամը, քանի որ վերջինս արտացոլում է Ընկերության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար դրամը հանդիսանում է նաև ներկայացման արժույթ:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

### **Գնահատումների և դատողությունների օգտագործում**

Այս ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Մասնավորապես, հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 10-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր»:

## **3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ**

Ստորև նշված հաշվապահական հաշվառման քաղաքականությունները հետևողականորեն կիրառվել են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում:

### ***Եկամտի և ծախսի ճանաչում***

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտերը կհոսեն Կազմակերպություն, և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Կազմակերպությունից, և ծախսը հնարվոր է արժանահավատորեն չափել:

Տոկոսային եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում հաշվեգրման եղանակով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկի տրամադրման ու սպասարկման ծախսերը, ինչպես նաև այլ ծախսերը, որոնք համարվում են վարկի ընդհանուր եկամտաբերության անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսումների հետ միասին հանդիսանում են հետաձգված ծախսեր և ամորտիզացվում են որպես տոկոսային եկամուտ ֆինանսական գործիքի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վարձավճարները, կոմիսիոն վճարները և այլ եկամուտ և ծախս հոդվածները ճանաչվում են շահույթ կամ վնասում, երբ համապատասխան ծառայությունը մատուցվում է :

### ***Արտարժույթով գործարքներ***

Արտարժույթով գործարքները փոխարկվում են Ընկերության համապատասխան ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթի փոխարկումից օգուտը կամ վնասը

Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթի ամորտիզացված արժեքի՝ ճշգրտված ժամանակաշրջանի ընթացքում արդյունավետ տոկոսի և վճարումների գծով, և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված արտարժույթի ամորտիզացված արժեքի միջև տարբերությունն է: Իրական արժեքով չափված, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այն օրվա դրությամբ, երբ որոշվել է իրական արժեքը: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն տարբերությունների, որոնք առաջանում են վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների փոխարկումից, որոնք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

### **Հարկում**

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական եկամտի հողվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ցանկացած ճշգրտում:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմք ընդունելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունները: Ժամանակավոր տարբերություններ չեն ճանաչվում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար այնպիսի գործարքներում, որոնք ոչ հաշվապահական ոչ հարկվող շահույթի վրա ազդեցություն չունեն: Հետաձգված հարկերի գումարը հիմնված է ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի իրացման կամ մարման ակնկալվող եղանակ վրա՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

### **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Ընկերությունը ներառում է դրամական միջոցները, թղթակից բանկերում պահվող ընթացիկ հաշիվները և ավանդները, որոնք ավանդային պայմանագրերը ժամկետից շուտ լուծելու դեպքում ավանդը և այդ պահի դրությամբ հաշվարկված տոկոսները բանկի կողմից հաշվեգրվում են ընկերության հաշվարկային հաշվին՝ առանց որևէ կորուստ կրելու, «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ» հոդվածում:

## **Ֆինանսական գործիքներ**

### **Դասակարգում**

Ֆինանսական գործիքները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով այն ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորություններն են, որոնք.

- ձեռք են բերվել կամ ստանձնվել են հիմնականում կարճ ժամանակամիջոցում վաճառելու կամ հետգնելու նպատակով,
- միասին կառավարվող ֆինանսական գործիքների պորտֆելի մի մաս է, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի պատկերի վերաբերյալ,
- ածանցյալ գործիքներ են (բացառությամբ այնպիսի ածանցյալ գործիքների, որոնք նախատեսված և արդյունավետ հեջավորման գործիքներ են),
- սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսվել են որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ընկերությունը կարող է նախատեսել ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները որպես չափվող իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով, երբ կամ.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում և գնահատվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ էապես նվազեցնում է հաշվառման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը նշանակալիորեն ձևափոփոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի շրջանակներում:

Վաճառքի համար պահվող բոլոր ածանցյալ գործիքները ստացման ենթակա զուտ գումարում (դրական իրական արժեք), ինչպես նաև ձեռքբերված օպցիոնները գրանցվում են որպես ակտիվներ: Վաճառքի համար պահվող բոլոր ածանցյալ գործիքները վճարման ենթակա զուտ գումարում (բացասական իրական արժեք), ինչպես նաև դուրս գրված օպցիոնները գրանցվում են որպես պարտավորություններ:

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն ակտիվների, որոնց Ընկերությունը.

- մտադիր է անմիջապես կամ մոտ ապագայում վաճառել,
- սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսել է որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսել է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- կարող է չփոխհատուցել ըստ էության ողջ իր սկզբնական ներդրումը այլ պատճառով, քան պարտքային դիրքի վատթարացումը:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք Ընկերությունը հստակ մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ՝

- նրանց, որոնց կազմակերպությունը սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսում է որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- նրանց, որոնց կազմակերպությունը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի,
- նրանց, որոնք բավարարում են փոխառությունների և դեբիտորական պարտքերի սահմանմանը:

*Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները* ոչ ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ են, որոնք կազմակերպության կողմից նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի, կամ որոնք դասակարգված չեն որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, կամ ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ղեկավարությունը որոշում է ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը սկզբնական ճանաչման պահին: Ածանցյալ ֆինանսական գործիքները և ֆինանսական գործիքները, որոնք սկզբնական ճանաչման պահին նախատեսվել են որպես չափվող իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով, չեն վերադասակարգվում «չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» կատեգորիայից: Ֆինանսական ակտիվը, որը կբավարարեր փոխառության և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել «չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» կամ «վաճառքի համար մատչելի» կատեգորիայից, եթե կազմակերպությունը մտադրված է և ի վիճակի է այդ ֆինանսական ակտիվը պահել տեսանելի ապագայում կամ մինչև մարումը: Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել «չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» կատեգորիայից եզակի դեպքից առաջացող հազվագյուտ հանգամանքներում, որ անսովոր է և գրեթե անհավանական, որ կրկնվի կարճ ժամանակամիջոցում:

## **Ճանաչում**

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների բոլոր կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

## **Չափում**

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին չափվում է իր իրական արժեքով՝ գումարած՝ այն դեպքում, երբ դա ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ հանդիսացող ածանցյալ գործիքները, պետք է չափվեն իրենց իրական արժեքներով՝ առանց կատարելու որևէ նվազեցում գործարքի հետ կապված այն ծախսումների գծով, որոնք Ընկերությունը կարող է կրել վաճառքի կամ այլ ձևով օտարման ժամանակ, բացառությամբ՝

- փոխառությունների և դեբիտորական պարտքերի, որոնք պետք է չափվեն ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, որոնք պետք է չափվեն ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,

- բաժնային գործիքների մեջ ներդրումներ, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, որոնք պետք է չափվեն սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ նրանց, որոնք նախատեսված են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթ կամ վնասի միջոցով, և ֆինանսական պարտավորությունները, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի որակվում որպես ապաճանաչման ենթակա, պետք է չափվեն ամորտիզացված արժեքով: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Պարզևավանդները և զեղչերը, ներառյալ՝ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ներառվում են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ հիմնվելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վրա: Երբ դիտարկելի շուկայից ստացված տվյալների հիման վրա կատարած գնահատումը ցույց է տալիս ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի օգուտ կամ վնաս, ապա օգուտը կամ վնասը անմիջապես պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Երբ սկզբնական օգուտը կամ վնասն ամբողջությամբ հիմնված չէ դիտարկելի շուկայի տվյալների վրա, այն պետք է հետաձգվի և ճանաչվի ակտիվի կամ պարտավորության ծառայության ընթացքում համապատասխան հիմունքով, կամ, երբ գները դառնում են դիտարկելի, կամ ակտիվի կամ պարտավորության օտարման պահին:

### **Իրական արժեքի չափման սկզբունքներ**

Ֆինանսական գործիքների իրական արժեքի լավագույն վկայությունը գործող շուկայի գնանշված շուկայական գներն են առանց գործարքի հետ կապված ծախսումների նվազեցման: Եթե գնանշված շուկայական գները առկա չեն, ապա իրական արժեքը որոշվում է՝ առավելագույնս օգտագործելով շուկայական տվյալները: Գնահատման տեխնիկաները ներառում են շուկայում վերջերս կատարված իրագեկ, պատրաստական «անկախ կողմերի միջև գործարքների» օգտագործումը, համեմատաբար համանման գործիքների ընթացիկ շուկայական գները, զեղչված դրամական միջոցների հոսքերի վերլուծությունը և օպցիոնների գնահատման մոդելները և գործիքը գնորոշելու համար շուկայի մասնակիցների կողմից սովորաբար կիրառվող այլ տեխնիկաներ:

Երբ կիրառվում են զեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկաներ, գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերը հիմնվում են դեկավարության լավագույն գնահատականի վրա, և զեղչված դրույքը համարվում է շուկայական դրույքը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ այն գործիքի համար, որն ունի համանման պայմաններ: Երբ կիրառվում են գնորոշման մոդելներ, տվյալները հիմնվում են շուկայական ցուցանիշների վրա՝ հաշվետու ամսաթվի դրությամբ:

Այն անանցյալ գործիքների իրական արժեքը, որոնք արժեթղթերի շուկայում չեն շրջանառվում, գնահատվում է այն գումարով, որն Ընկերությունը կստանար կամ կվճարեր հաշվետու ամսաթվի դրությամբ պայմանագիրը դադարեցնելու համար՝ հաշվի առնելով ընթացիկ շուկայի պայմանները և գործընկերների ընթացիկ վարկունակությունը և սեփական պարտքային ռիսկը:

### **Օգուտներ և վնասներ հետագա չափման գծով**

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունից առաջացած օգուտը կամ վնասը պետք է ճանաչվի հետևյալ կերպ.

- որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգված ֆինանսական գործիքի գծով օգուտը կամ վնասը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում,
- որպես վաճառքի համար մատչելի դասակարգված ակտիվի գծով օգուտը կամ վնասը պետք է ճանաչվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական

եկամուտ, բացառությամբ արժեզրկումից կորուստների և արտարժույթի փոխարժեքից առաջացած օգուտների կամ վնասների, քանի դեռ այդ ակտիվը ապահանջված չէ: Այդ ժամանակ, նախկինում սեփական կապիտալում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ակտիվի գծով տոկոսը ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես վաստակած՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դեպքում օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը ապահանջվում է կամ արժեզրկվում, ինչպես նաև՝ ամորտիզացիայի միջոցով:

## **Ապահանջում**

Ֆինանսական ակտիվն ապահանջվում է, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ, երբ Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Փոխանցման ընթացքում առաջացած կամ պահպանված ցանկացած իրավունքներ և պարտականություններ ճանաչվում են առանձին՝ որպես ակտիվներ կամ պարտավորություններ: Ֆինանսական պարտավորությունը ապահանջվում է, երբ այն մարվում է:

Ընկերությունը նաև ապահանջում է որոշ ակտիվներ, երբ այն դուրս է գրում չհավաքագրվող համարվող ակտիվներին պատկանող մնացորդները:

## **Հաշվանցում**

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները պետք է հաշվանցվեն, և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ներկայացվի զուտ գումարը այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը տվյալ պահին ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կա՛մ հաշվարկը (մարումը) իրականացնել զուտ հիմունքով, կա՛մ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

## **Արժեզրկում**

### ***Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ***

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («Վարկեր և դեբիտորական պարտքեր»): Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է վարկերը և դեբիտորական պարտքերն արժեզրկումը գնահատելու նպատակով: Վարկը կամ դեբիտորական պարտքն արժեզրկված է, և կրվում են արժեզրկումից կորուստներ, միայն և միայն այն դեպքում, երբ գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն որպես մեկ կամ ավելի դեպքերի արդյունք՝ տեղի ունեցած վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական ճանաչումից հետո («կորստի դեպք»), և այդ կորստի դեպքը (կամ դեպքերը) այնպիսի ազդեցություն ունեն տվյալ վարկի կամ դեբիտորական պարտքի ապագա գնահատված դրամական միջոցների հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, վարկի կամ փոխառության պայմանների այնպիսի վերակազմավորում, որն Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի ակտիվ շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին

վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Ընկերությունը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Ընկերությունը եզրակացնում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ վարկը պարտքային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքներից և գրավից ստացվելիք գումարների, ներկա արժեքի միջև տարբերություն՝ գեղչված այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և պատմական կորստի փորձը, որոնց գծով ճշգրտումներ են կատարվել ներկա տնտեսական պայմաններն արտացոլող դիտարկելի տեղեկատվության հիման վրա, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկման կորստի գումարը գնահատելու համար պահանջվող դիտարկելի տվյալները կարող են սահմանափակ լինել կամ այլևս ամբողջությամբ չհամապատասխանել ներկա հանգամանքներին: Սա կարող է լինել այն դեպքում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություններ ունի և Ընկերության տրամադրության տակ կան քիչ տվյալներ համանման վարկառուների մասին: Այս դեպքերում արժեզրկումից կորստի գումարն Ընկերությունը գնահատում է՝ ելնելով փորձի վրա հիմնված իր դատողությունից:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից բոլոր կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Երբ վարկը չհավաքագրվող է, այն դուրս է գրվում վարկի արժեզրկման գծով համապատասխան պահուստի հաշվին: Ընկերությունը դուրս է գրում վարկի մնացորդը (ինչպես նաև վարկի կորուստների գծով ցանկացած համապատասխան պահուստ), երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկերն անհավաքագրելի են և, երբ վարկը հավաքագրելու բոլոր անհրաժեշտ գործողություններն արդեն սպառված են:

***Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները***



Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են չգնանշվող բաժնային գործիքներ, որոնք ներառվում են վաճառքի համար մատչելի ակտիվներում, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ դրա իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել: Եթե կա անկողմնակալ վկայություն, որ նման ներդրումներն արժեզրկված են, ապա արժեզրկումից կորստի գումարը չափվում է որպես ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվի համար ընթացիկ շուկայական հատույցադրույթով գեղջված ապագա գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:

Այսպիսի ներդրումների հետ կապված արժեզրկումից բոլոր կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և չպետք է հակադարձվեն:

### **Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները**

Վաճառքի համար մատչելի ակտիվների արժեզրկումից կորուստները ճանաչվում են՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված արժեզրկումից կորուստը փոխանցելով շահույթ կամ վնաս՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված արժեզրկումից կորուստը, որը վերադասակարգվում է՝ դուրս բերվելով այլ համապարփակ եկամտից և ներառվելով շահույթում կամ վնասում, ձեռքբերման արժեքի՝ հանած հիմնական գումարի ցանկացած մարում և ամորտիզացիա, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում այդ ֆինանսական ակտիվի գծով շահույթում կամ վնասում ճանաչված ցանկացած արժեզրկումից կորուստ, միջև տարբերությունն է: Ժամանակային արժեքին վերագրվող արժեզրկման դրույթների փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Վաճառքի համար մատչելի բաժնային գործիքում ներդրման իրական արժեքի՝ իր սկզբնական արժեքից նշանակալի կամ տևական նվազումը նույնպես հանդիսանում է արժեզրկման անկողմնակալ վկայություն:

*Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային գործիքի իրական արժեքն աճում է և այդ աճը կարելի է անկողմնակալ ձևով կապել մի դեպքի հետ, որը տեղի է ունեցել արժեզրկումը շահույթում կամ վնասում ճանաչելուց հետո, ապա արժեզրկումից կորուստը պետք է հակադարձվի՝ հակադարձման գումարը ճանաչելով շահույթում կամ վնասում: Այնուհանդերձ, վաճառքի համար մատչելի արժեզրկված բաժնային գործիքի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնում պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:*

### **Ոչ ֆինանսական ակտիվներ**

Ոչ ֆինանսական ակտիվները, բացի հետաձգված հարկերից, վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսերի և օգտագործման արժեքից առավելագույնն է: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղջվում են իրենց ներկա արժեքի՝ օգտագործելով մինչև հարկումը գեղջման այն դրույթը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից

կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը ցածր է այն հաշվեկշռային արժեքից, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

### **Հիմնական միջոցներ**

#### **Սեփական ակտիվներ**

Հիմնական միջոցների միավորները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայություն ունեցող կարևոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

#### **Վարձակալված ակտիվներ**

Այն վարձակալությունը, որի դեպքում Ընկերությանն են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն: Ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված հիմնական միջոցները ներկայացված են իրական արժեքից և վարձակալության սկզբում վարձակալության նվազագույն վճարների ներկա արժեքից նվազագույնով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

#### **Մաշվածություն**

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

- |                                |        |
|--------------------------------|--------|
| - Համակարգչային սարքավորումներ | 5 տարի |
| - Տնտեսական գույք              | 7 տարի |
| - Փոխադրամիջոցներ              | 5 տարի |

#### **Ոչ նյութական ակտիվներ**

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են ձեռք բերման արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների գծով ամորտիզացիան հաշվարկվում է՝ կիրառելով գծային մեթոդը վերջիններիս օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: 2014 և 2013 թթ. օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

- Համակարգչային ծրագրեր

10 տարի

### **Պահուստներ**

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունը էական է, պահուստները որոշվում են՝ զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում, պարտականությանը բնորոշ ռիսկերը:

Վերականգնվողման գծով պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը հաստատել է վերականգնվողման մանրամասն ֆորմալ պլանը, և վերականգնվողմանը կամ սկսվել է կամ հրապարակայնորեն հայտարարվել է: Ապագա գործառնական ծախսումների գծով պահուստ չի ճանաչվում:

### **Վարկային պարտավորվածություններ**

Բնականոն գործունեության ընթացքում, Ընկերությունը ստանձնում է վարկային պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային գծեր (վարկ տալու պարտավորվածություն), ակրեդիտիվներ և երաշխիքներ, ինչպես նաև վարկային ապահովագրության այլ ձևեր:

Ֆինանսական երաշխիքներն իրենցից ներկայացնում են Ընկերության կողմից որոշակի վճարումների կատարումը պարտավորեցնող պայմանագրեր, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտատերն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունն ի սկզբանե ճանաչվում է իրական արժեքով, հանած գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ ի սկզբանե ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխիքների և վարկային այլ պարտավորվածությունների գծով կորուստների պահուստներ ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն, և այդ վնասը հնարավոր է արժանահավատորել չափել:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունները և այլ վարկային պարտավորվածության գծով պահուստները ներառվում են այլ պարտավորություններում:

### **Բաժնետիրական կապիտալ**

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրվող լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ հանած բոլոր հարկային հետևանքները:

### **Շահաբաժիններ**

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրության պահանջներով: Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում հայտարարվելու ժամանակաշրջանում:

## 4 Տոկոսային եկամուտ և ծախս

	01.07.2015- 30.09.2015 Հազար դրամ	01.07.2014- 30.09.2014 Հազար դրամ	01.01.2015- 30.09.2015 Հազար դրամ	01.01.2014- 30.09.2014 Հազար դրամ
<b>Տոկոսային եկամուտ</b>				
Հաճախորդներին տրված վարկեր	62.005	59.202	189.616	172.820
Ավանդներ	900	2.959	900	10.713
Ընթացիկ հաշիվներ	260	69	310	289
	<b>63.165</b>	<b>62.230</b>	<b>190.826</b>	<b>183.822</b>

	01.07.2015- 30.09.2015 Հազար դրամ	01.07.2014- 30.09.2014 Հազար դրամ	01.01.2015- 30.09.2015 Հազար դրամ	01.01.2014- 30.09.2014 Հազար դրամ
<b>Տոկոսային ծախս</b>				
Փոխառություններ ֆինանսական հաստատություններից	(17.976)	(23.148)	(68.369)	(69.069)
Փոխառություններ շահույթ չհետապնդող կազմակերպություններից	(5.578)	(81)	(6.553)	(11.432)
	<b>(23.554)</b>	<b>(23.229)</b>	<b>(74.922)</b>	<b>(80.501)</b>

## 5 Արժեզրկումից կորուստ

	01.07.2015- 30.09.2015 Հազար դրամ	01.07.2014- 30.09.2014 Հազար դրամ	01.01.2015- 30.09.2015 Հազար դրամ	01.01.2014- 30.09.2014 Հազար դրամ
Հաճախորդներին տրված վարկեր	(9.909)	(296)	(45.893)	(888)
	<b>(9.909)</b>	<b>(296)</b>	<b>(45.893)</b>	<b>(888)</b>

## 6 Աշխատակիցների գծով ծախսեր

	01.07.2015- 30.09.2015 Հազար դրամ	01.07.2014- 30.09.2014 Հազար դրամ	01.01.2015- 30.09.2015 Հազար դրամ	01.01.2014- 30.09.2014 Հազար դրամ
Աշխատակիցների փոխհատուցումներ	(12.817)	(10.448)	(35.841)	(28.148)
	<b>(12.817)</b>	<b>(10.448)</b>	<b>(35.841)</b>	<b>(28.148)</b>

## 7 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	01.07.2015- 30.09.2015 Հազար դրամ	01.07.2014- 30.09.2014 Հազար դրամ	01.01.2015- 30.09.2015 Հազար դրամ	01.01.2014- 30.09.2014 Հազար դրամ
Վերանորոգում և սպասարկում	(1.845)	(1.481)	(4,594)	(4.048)
Հեռահաղորդակցություն և տեղեկատվական ծառայություններ	(645)	(639)	(1.833)	(1.746)

	01.07.2015- 30.09.2015 Հազար դրամ	01.07.2014- 30.09.2014 Հազար դրամ	01.01.2015- 30.09.2015 Հազար դրամ	01.01.2014- 30.09.2014 Հազար դրամ
Մասնագիտական ծառայություններ	(540)	(540)	(1.620)	(1.620)
Հարկեր, բացի շահութահարկից	(952)	(889)	(1.868)	(1.715)
Ներկայացուցչական ծախսեր	(124)	(103)	(254)	(804)
Գործուղման ծախսեր	(228)	(338)	(964)	(714)
Վարձակալության գծով ծախսեր	(240)	(240)	(720)	(720)
Մաշվածություն և ամորտիզացիա	(712)	(646)	(2.135)	(1.938)
Գրասենյակային ծախսեր	(245)	(187)	(488)	(285)
Այլ	(397)	(430)	(1.528)	(1.355)
	<b>(5.928)</b>	<b>(5.493)</b>	<b>(16.004)</b>	<b>(14.945)</b>

## 8 Շահութահարկի գծով ծախս

	2014 Հազար դրամ
<b>Ընթացիկ հարկային ծախս</b>	
Ընթացիկ տարի	13.757
	<b>13.757</b>
<b>Հետաձգված հարկային ծախս</b>	
